ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, քարտուղարություն 370-274, ֆաքս 370-296

№ 4192 «16» 02 2021 թ.

Ձեր

**«Պահապան» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00882372)**
**տնօրեն՝ Վ. Մելիք-Սարգսյանին**
*ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2*
*էլ. հասցե՝ 0507200069@mail.ru*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին**

ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով՝ հանդերձանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Պահապան» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Մատակարարը Պայմանագրով նախատեսված ժամկետներում (մինչ օրս) չի մատակարարել՝

1. Տարազաբաճկոն-կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա - 30 լրակազմ,
2. Բաճկոն-տաբատ՝ կիսաբրդյա - 60 հատ,
3. Բաճկոն-տաբատ գունաքողարկող սև՝ կիսաբրդյա, կեպիով - 70 հատ,
4. Թիկնոց-ուսնոց - 538 հատ,
5. Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ - 50 հատ,

6.Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ - 114 հատ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2021թ-ի փետրվարի 15-ին միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-20/10/Բ/2/ԻԾ-6» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից:

«Պահապան» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

***Գնդապետ*** ***Հ. Բաբայան***